ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունվարի 08-ին ստորագրված N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-21/1-Պ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան 28 դեկտեմբերի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից և

«Հելիքս Կոնսալտինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Մխիթարյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

(այսուհետ, յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

Հիմք ընդունելով Կողմերի միջև 2021 թվականի հունվարի 08-ին ստորագրված N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-21/1-Պ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6. կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝

ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագրի 3.1. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.1. «Սույն Պայմանագրով նախատեսված պայմանները կիրառվում են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը՝ 2021 թվականի հունվարի 01-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Սույն Պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

2. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ**
Հ. Մովսիսյան	**Ա. Մխիթարյան**
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*